

Էր որ գէթ միագոյն, թէկուզ սխեմատիկ կարտէզներ լինէին։ Պէտք է ի նկատի ունենալ որ «կիպերաի քարտէզը» կամ «Աւելիշանի «Այրարատը», «Կիլիկիան» ևայլն շատ քչերի համար են սատչելի։ Գնի կողմից բաւական սուլ է և այս «Բնաշխարհիկ բառարանը», որի կլիշէների մեծագոյն մասը բազմիցը շահագործուած են վենետիկիան հրատարակութիւնների մէջ... ուստի պէտք է այնքան էլ չթանգացնէին ներկայ տպագրութիւնը։

Na.

Բժ. ուս. Դ, Մադամեամ՝ «Բժօկականութիւնն իւ հաստրակութիւն», 12 պատկերներով, Թիֆլիս, 1904 թ., զին է 25 կոպ.։

Բժշկական գիտութիւնը առանձին բախտ, ունի հայերիս մէջ. ոչ միայն յատուկ օրգան ունինք բժշկական և առողջապահական հարցերին նուիրուած, այլև մեծ ու փոքր, ինքնուրոյն և թարգմանական բազմաթիւ գրքեր էլ են լոյս տեսնում նոյն ճիւղին վերաբերեալ. շատ պրակտիկական ազգ ենք և մեծ ջանքեր ենք գործ դնում առողջ լինելու համար. վատ չէ, մասնաւանդ որ ակսիօմա է համարւում «առողջ միտքը—առողջ մարմնի մէջ» ասացուածքը... թէկ մոռացում է յաճախ որ կան շատ առողջ մարմիններ առանց մոքեի էլ...»

Գրքի ամենահետաքրքրական մասը գիտական բժշկականութեան զարգացման համառօտ պատմութիւնն է։ Մի քիչ չափազանցութիւն կայ բժիշկ-ուսանող հեղինակի հետևալ խօսքերի մէջ. «Կարծում ենք՝ չենք սխալուիլ, եթէ ասենք, որ ոչ մի դասակարգ այնպիսի անձնութրութեամբ չի ծառայում հասարակութեան, ինչպէս բժիշկները»։ «Բժիշկը ճրագ է, որ լոյս է տալիս՝ ինքը վառուելով»։ Մենք կարծում ենք որ բժշկականութիւնը այն ձևով, ինչպէս նա գործադրուում է այժմ ներկայ հասարակական կեանքում, աւելի օգուտ է բերում ունենոր դասակարգերին, քան չքաւոր մասսաներին. բազմաթիւ են օրինակները, որոնք ապացուցում են որ մասնաւոր պրակտիկայով ապրելու անհրաժեշտութիւնը առիթ է տալիս եսական, նոյնիսկ տմարդի շահասիրական յարաբերութիւններ բժշկողի և բժըշկուղների մէջ. իւրաքանչիւր հիւանդ մարդու լաւագոյն բըժշկութիւնը պէտք է դառնայ հասարակութեան գործ, հասարակութեան հաշուով, այն ժամանակ զանազան Զախարինները լոկ միլիօնատէրերի համար չեն դառնալ մատչելի։ Մէկ խօս-

բով բժշկական օգնութեան կազմակերպելու գործում կան շատ պակասութիւններ, որոնց չնորհիւ այդ գիտական բարիքից օգտում է տարարախտաբար մարդկութեան շատ չնշին մասը, և բրոշիւրները, ինչքան էլ լաւ գրած լինեն, չափազանց քիչ են փոխում այդ չարիքն առաջացնող պայմանները:

Na.

Յ. Մանանդեան՝ «Թաւիր Անցաղը Խնդիրը նոր լուսաբանութեամբ», մատենադրական հետազոտութիւն, Վաղարշապատ, 1904 թ., գին է 20 կոպ.:

Հին Հայաստանը տուել է այն ժամանակուայ քաղաքակիրթ մարդկութեան երկու նշանաւոր մոտաւոր ոյժեր, որոնց անունը յայտնի էր իրանց հայրենիքից դուրս. դրանք են Պրոյերեսիոսը և Դաւիթ փիլիսոփան. այս վերջինը մեծ ծառայութիւն ունի արած աւելի իր հայրենիքին. ստեղծել իմաստասիրական բազմաթիւ ոճեր և բառեր, փորձել Արիստոտելի մտքերը հայերէն արտայայտել, վերլուծել նրան,—դա մեծ քայլ էր մեր լեզուի զարգացման հարցում, թէկուզ «ժողովրդական» Ախնէին այդ գրուածքները:

Այդ ժաւաթի անձնաւորութիւնը մի առեղծուած է եղել թէ բիւզանդակէտների և թէ հայագէտ բանաստեղծների համար։ Յոյները Դաւթին իրանց ազգից են ընդունել: Բանը այն է որ երկու Դաւիթի իմաստասէլների մասին տեղեկութիւններ կան. Դաւիթ Մեկնիչ և Դաւիթ Նորքացի, որոնք երկի տարբեր անձնաւորութիւններ են. այդ աւելի ևս խճճում է հարցը։ Պարզել Դաւթի և նրան վերագրած երկերի վերաբերեալ խընդիրները—ահա այդ ուսումնասիրութեան նպատակը։ Պ. Մանանդեանը իր հետազոտութեան մէջ հետևեալ թեզիսներն է դընում,

§ 1. Դաւթի մասին նախկին հետազոտութիւնները.

§ 2. Ֆ. Կոնիքիրի կարծիքը.

§ 3. Բանասիրական ուսումնասիրութեան ո՞ր եղանակով կարելի է հաստատուն եղրակացութիւններ ստանալ:

§ 4. Սահմանք Իմաստասիրութեան, Պորփիրի Ներածութեան մեկնութիւնը և Արիստոտելի Վերլուծականքի մեկնութեան հատուածը միևնույն հեղինակի Դաւիթ փիլիսոփայի գործ են, իսկ Արիստոտելի «Յաղագս մեկնութեան» և «Մառը ըոգութեանց» հայերէն մեկնութիւնները Դաւթինը չեն.

§ 5. Դաւթի իմաստասիրական երկերը.